'ի գերեզման Ս. Աստուածածնի, եւ զետեղել զիւրաքանչիւրն 'ի տեղիս իւրեանց, և եւ նոցա զբանալի արտաքին դրանն, և հրամայեաց կատարել զպաշտամունս ըստ առաջին կերպի, Նոյնպէս և յեկեղեցին Բեթղեհէմի, և եւ ըզբանալի հիւսիսային դրան Այրին, որպէս և ունէին. ՌՌՎ (1759)։

Թէոդորոս Պատրիարք յառաջադոյն աղերսական գրով խնդրեալ էր յԱրքայէ զպատճէն հրովարտակին Ցունաց, և նորա կամեցեալ բառնալ զխռովութիւնս ազգաց, հրամայեաց առաքել զայն 'ի ձեռն Մէհէմմէտ էմին պաշտօնէի գրան, որ ունէր օրինակ զայս։ «Ցաղագս բառնալոյ ըզխռովութիւնս Ցունաց և Լատինաց պատահեալ յառաջադոյն 'ի միջի նոցա վասն Ս. Տեղեաց քրիստոնէից, քննեցան ասա 'ի Դուռն դաշնագիրն Լատինաց և հրովարտակք Ցունաց, եւ յայտնի եղեն խնդիրք երկաքանչիւրոց։ Այսոքիկ են օրինադրեալքն որք չհակառակին դաշնագրոյն, երկոքին աշտանակքն Պատանատեղւոյն էին 'ի ձեռս Լատինաց, իսկ հին գրեանքն Ցունաց՝ հաստատեն զայնս լինել նոցա, այլ վասն խաղաղութեան հրամայեցաւ Ցունաց եւս դնել անդ զերկուս աշտանակս, և իւրաքանչիւր ոք ուշ դնել աշտանակի իւրոյ։ Փոքր դժուարթն Գերեզմանին Քրիստոսի՝ ըստ առաջին սովորութեան մնալ ընդ հրկողութեամբ Ցունաց, եւ վերին յարկն եօթն կամարաց Ս. Կուսին՝ լինել բնակութիւն կրօնաւորացն Լատինաց, և ստորին կողմն մնալ 'ի ձեռս Ցունաց, եւ իւրաքանչիւր ազգաց 'ի սահմանեալ տեղիս իւրեանց կատարել զօրէնս։ Գերեզմանն Ս. Աստուածածնի՝ 'ի հին հրովարտակս Ցունաց բացայայտ երեւի իրաւունք նոցին, իսկ 'ի դաշնագիրս Լատինաց չիք ինչ յիշատակութիւն վասն այնր, որոյ վասն եկեղեցին այն տուաւ պատրիարքին Ցունաց և կղերաց նորին՝ տիրել նմա։ Նոյնպէս և մեծ եկեղեցին Բեթղեհէմի. իսկ Այրն Ծննդեան անդ՝ գոլով ուխտատեղի երկուց ազգաց, և փականք նորին լեալ էին յառաջադոյն 'ի ձեռս Ցունաց, զորս նենդութեամբ յափշտակեալ Լատինաց, և 'ի գալստեան ուխտաւորացն Ցունաց, տային սպասել արտաքոյ դրան զերկուս և զերիս ժամս. առ 'ի բառնալ ըզնեղութիւնս զայս, հարկ եղեւ տալ զմի բանալի 'ի ձեռս